

ԼՎՈՎԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՂԱՄԱՍԸ*

Հայերը Լվով են գաղթել հիմնականում Ղրիմից: Այդ մասին են վկայում Լվովի հայերի կապերը Կաֆայի հայ բնակչության հետ, ինչպես նաև գաղթավայրերում հայատառ ղփչաղերեն լեզվի գործածությունը: Սակայն, այստեղ ապրելով, հայերը երբեք չեն մոռացել հեռավոր Հայաստանը, պահպանել են իրենց սովորույթներն ու մշակութային ավանդույթները:

Այսօր դժվար է որոշակիորեն պատասխանել այն հարցին, թե Լվովում առաջին հայկական գաղթավայրը երբ և որտեղ է հիմնադրվել: Հնարավոր է, որ այդ գաղթավայրը առաջացել է 12-րդ դարի վերջին կամ 13-րդ դարի սկզբին, դեռևս մինչև Բաթու խանի հորդաների ներխուժումը Ռուսաստան: Սակայն առավել հավանական է, որ իշխան Դանիլ Ռոմանովիչը, 1256 թ. Լվով քաղաքը հիմնադրելիս, հրավիրել է իրենց վարպետությամբ հռչակված հայ արհեստավորներին:

Հայ նորաբնակները հավասարապես օգտվել են Լվովի հիմնական բնակիչների ունեցած իրավունքներից: Հավասար իրավունքներ ունենալու հանգամանքը ուկրաինացիների և հայ բնակչության բարեկամության համար հիմք է հանդիսացել և լեհական ազնվականության կողմից Գալիցիայի հողերը գրավելու ժամանակ նրանց միավորել է սոցիալիստական և ազգային խտրականության դեմ մղված ընդհանուր պայքարում:

Ենթադրվում է, որ դեռևս հին Ռուսիայի գոյության շրջանում հայ վաճառականներն ու արհեստավորները նախապես բնակություն են հաստատել քաղաքի Զամկովի (բերդի) լեռան լանջին՝ այժմյան Բոգդան Խմելնիցկու փողոցի մոտակայքում, որն այն ժամանակ գտնվում էր գլխավոր առևտրական ճանապարհի վրա: Ըստ երևույթին, այստեղ է կառուցվել հայկական առաջին եկեղեցին, որի մասին հաճախ հիշատակվում է գրավոր աղբյուրներում:

Հինռուսական Լվովում հայկական գաղթավայրերի բնակչության թվի մասին հավաստի տվյալներ չկան: Սակայն Լվովի գաղթավայրը Ուկրաինայի գրեթե ամենախոշոր գաղթավայրերից մեկն էր, քանի որ արդեն 1364 թ. Ռուսիայի և Վալախիայի համայն հայոց թեմական կենտրոնը այստեղ էր ստեղծվել:

1356 թ. Լվով քաղաքին մագդեբուրգյան իրավունք շնորհվելուց հետո սկսեց ձևավորվել նրա միջնադարյան կորիզը: Քաղաքի շուրջը պաշտպանական պարիսպներ և պատնեշներ կառուցվեցին: Հայկական գաղթավայրի մի մասը քաղաքի սահմանների մեջ մտավ և Հայկական փողոցի երկու կողմերում Հայկական թաղամասի զարգացման համար հիմք ծառայեց:

Աջից այդ թաղամասը հարում էր Շուկայի հրապարակին, ձախից՝ պաշտպանական պատնեշին, որը Ներքին բերդից տարածվելով այսօրվա Լեսյա Ուկրաինկա փողոցի երկարությամբ, կազմում էր Ներքին Հայկական Նեղլիկ փողոցը: Արևելքից եզերվում էր դոմինիկյանների վանքի համալիրի շենքերով, իսկ արևմուտքից՝ Կրակովյան փողոցի կառուցապատումներով: Մինչև 16-րդ դարը Հայկական և Կրակովյան փողոցները իրարից բաժանվում էին դարպասով, որը բացում էր դեպի հայկա-

* Ըստ Ռ. Լիպկայի «Հայկական փողոցի համալիրը» գրքի (ուկրաիներեն և ռուսերեն), Լվով, 1983 թ.:

կան թաղամաս տանող ճանապարհը: Այստեղ մի քանի դարերի ընթացքում գլխավորապես հայեր էին ապրում: Նրանք շարունակում էին իրենց բնակությունը նաև հարևան արվարձանում:

Առանձին պատմական աղբյուրներից քաղված սուղ տեղեկությունները վկայում են այն մասին, որ Լվով քաղաքի սահմաններում 1518 թ. բնակվում էր 48 հայ ընտանիք, 1575 թ.՝ 60, 1633 թ.՝ արդեն ավելի քան 80, իսկ քաղաքի պարսպից դուրս, Կրակովյան արվարձանում, բնակվում էին ավելի քան 280 հայ ընտանիքներ: Այսպիսով, Լվովում 17-րդ դարի առաջին կեսին ապրում էին շուրջ երկու հազար հայեր:

Մինչև 1469 թ. Լվովի հայ բնակիչների համայնքը գլխավորում էր վոյտը և ավագների խորհուրդը, որի կազմի մեջ ընդգրկվում էին 12 առավել ունևոր քաղաքացիներ: Հետագայում, կաթոլիկների կողմից կրոնական թշնամանք հրահրելու շրջանում, Լվովի հայերը կարողացան պահպանել հասարակական և մշակութային որոշ հիմնարկներ, օր.՝ դատարանը, հայկական դպրոցները, հիվանդանոցը և գրադարանը: Որոշ ժամանակ գործում էր Տեր-Հովհաննես Կարմատենյանցի տպարանը: Մեզ հասել են այստեղ տպագրված և այժմ հազվագյուտ դարձած գրքեր:

Գաղթավայրի հասարակական կյանքի կենտրոնը Հայկական մայր եկեղեցին էր: Երկար ժամանակ այստեղ էր գտնվում լուսավորչական եպիսկոպոսության կենտրոնը, որն անմիջականորեն ենթարկվում էր Էջմիածնին:

Արևելքի երկրների հետ կատարվող շատ եկամտաբեր առևտրի գործում Լվովի հայ վաճառականները առաջատար դեր էին խաղում: Նրանց կարավանները մեկնում էին Ստամբուլ, Կահիրե, Ալեքսանդրիա, Բաղդադ և այլ հեռավոր քաղաքներ: Արևելյան և հարավային երկրների ապրանքները՝ գորգերը, մետաքսը, մահուդը, վարպետորեն զարդարված զենքերը, միրգը, պղպեղը, գինին, Լվովի շուկայում հայկական էին անվանվում և թանկ գնահատվում:

Հայ արհեստավորները՝ կաշեգործները, ոսկեթել-ասեղնագործողները, ոսկերիչները, ակնագործները և զինագործները, հռչակված էին իրենց բացառիկ աշխատասիրությամբ և վարպետությամբ: Նրանց պատրաստած զենքը դրվագազարդված էր արծաթով ու ոսկով, իսկ ոսկերչական իրերը զարդարված էին արևելյան նրբին զարդանկարներով:

Օտարերկրյա հյուրերի և ճանապարհորդների վկայության համաձայն Հայկական փողոցի, Ծուկայի հրապարակի և Ռուսական փողոցի կառուցապատումները Լվովում լավագույններից էին համարվում: Արդեն 15-րդ դարում փողոցն ուներ քարե սալահատակ, ջրամատակարարում և ջրթափ կոյուղի: Լվովի Հայկական փողոցի կառուցապատմանը մասնակցել են քաղաքում աշխատող տեղաբնակ և օտարերկրյա հայտնի ճարտարապետներ:

Լվովի հայկական գաղութը հարյուրամյակների ընթացքում ապրում էր իր ինքնօրինակ կյանքով: Դիմավորում էր հեռավոր երկրներից վերադարձող վաճառականների կարավանները, տարբեր ապրանքների աշխույժ վաճառք էր կատարում, կազմակերպում էր աղմկալից տոնահանդեսներ և ճոխ հարսանիքներ:

Գաղթավայրը խոշոր մշակութային կենտրոն էր: Այստեղ ապրում և աշխատում էին հռչակավոր փիլիսոփա Ստեփանոս Լվովցին, պատմիչ և գրող Սիմոն դը-սիր Լեհացին, որը հայտնի էր կաթոլիկության տարածման դեմ ուղղված հրապարակախոսական երկերով: 1668—1669 թթ. Լվովի հայկական գաղութում, Կոլեգիումի ուսանողների ուժերով, առաջին անգամ կազմակերպվեցին թատերական ներկայացումներ: Լվովի կերպարվեստի զարգացման հարցում զգալի դեր են կատարել Պողոս և Սիմոն Բոգուշևիչների ստեղծագործությունները: Ճանաչում են ստացել Լվովի վարպետների աշխատանքները հայ գրքի մանրանկարչության ասպարեզում:

1582 թ. հուլիս ամսվանից սկսած, վեց տարիների ընթացքում, Հայկական թաղամասում հյուրընկալվել է Մարտին Գրունևեգը, որը Լվովի մասին կարևոր նկարագրություն է թողել: Վաճառականների կարավաններով նա մեկնել է Ստամբուլ, եղել է Կիևում և Մոսկվայում: Նրա գործատեր հայազգի Աստուրը, ինչպես նշում է ինքը՝ Գրունևեգը, նրա համար ոչ միայն գործատեր էր, այլև հայր: Ի դեպ, Մարտին Գրունևեգը առաջինն է, որ թողել է մեզ Հայկական թաղամասի շենքերի և կառուցապատումների հատակագիծն ու նկարագրությունը:

Լվովի Հայկական փողոցում տեղի էին ունենում նաև դրամատիկ իրադարձություններ: 1527 թ. հուլիսին Գրոդսկի (այժմյան Թատերական) փողոցում, գարեջրի գործարանում հրդեհ բռնկվեց: Հրդեհը տարածվեց Հայկական փողոցում և այստեղից անցնելով մյուս փողոցներին, ամբողջ քաղաքը մոխրի վերածեց: Հրդեհի

հետևանքով կործանվեց ողջ գոթական Լվովը: Հետագայում նրա մոխիրներից քաղաքը վեր բարձրացավ վերածննդի զգեստով:

16-րդ դարի վերջին և 17-րդ դարի սկզբին Հայկական փողոցի բնակիչները բազմիցս հանդես են եկել հայոց եկեղեցու բռնի կաթոլիկացման դեմ: Կաթոլիկություն ընդունելուց հետո Լվովի հայկական գաղութը կորցնում է իր ինքնուրույնությունը և անկում է ապրում: Արևելքի երկրների հետ ունեցած առևտուրը նվազում է:

1704 թ. սեպտեմբերին շվեդական զորքերը ավերեցին քաղաքը: Անուղղելի կորուստներ կրեց նաև հայկական գաղութը: Միևնույն ժամանակ սկսվեց հայկական ունևոր վերնախավի լեհացումը: Նրա ներկայացուցիչները սկսեցին տեղափոխվել այլ փողոցներ, կամ միավորվեցին լեհ ազնվականության հետ, դարձան հողատերեր և լքեցին քաղաքը:

1772 թ. ավստրիական զորքերի կողմից Լվովի գրավումից հետո մոտակա փողոցներից և այլ երկրներից Հայկական փողոցում բնակություն են հաստատում մանր վաճառականներ: Այդ շրջանում Լվովի հայերը զրկվում են ինքնավարության իրավունքից: Հայկական գաղութը սկսում է անկում ապրել: 1782 թ. Լվովում ապրում էին 211 հայ բնակիչներ: Ծարունակում է գոյատևել միայն հայ կաթոլիկ արքեպիսկոպոսությունը:

17—19-րդ դարերի ընթացքում հաճախ փոփոխության են ենթարկվում շենքերի կառույցները, որի հետևանքով աստիճանաբար անհայտանում է հայկական ճարտարապետական ոճը: Միևնույն ժամանակ կառուցվում են նոր ոճի շենքեր, կամ շենքերի հարկերը բարձրացվում են: Սակայն ժամանակը բոլորովին չի վերացնում Հայկական փողոցի ճարտարապետական համալիրը: Այսօր էլ կարելի է նկատել հին ճարտարապետության բազմաթիվ կոթողներ:

20-րդ դ. Լվովի հայերը ստեղծել են մշակութային ընկերություններ և հրատարակել ամսագրեր: Ներկայումս Լվովում ապրում են շուրջ 1500 հայեր, որոնք ակտիվ մասնակցություն ունեն քաղաքի տնտեսական և մշակութային կյանքին: